ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 1-ին կետում «կատարելու),» բառից հետո լրացնել «միջազգային կազմակերպությունում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (պաշտոնական պարտականությունները կատարելու),» բառերը.

2. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ մասով.

«7. Միջազգային կազմակերպությունում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (պաշտոնական պարտականությունները կատարելու) ժամանակահատվածները կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառվում են սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 1-ին հավելվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող կենսաթոշակային վճարը, ՀՀ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում, անձի համար կատարված լինելու դեպքում:».

Հոդված 2. Օրենքը լրացնել 1-ին հավելվածով՝ համաձայն հավելվածի :

Հոդված 3. Օրենքն ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 4. Անցումային դրութեներ

Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կենսաթոշակային վճարը հաշվարկվում եւ վճարվում է կենսաթոշակային վճարի հաշվարկման օբյեկտի նկատմամբ 10 տոկոսի չափով: